ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐՈ ԳՀԱՊՁԲ-20-9/7-1

ք. Երևան 17 -ը հունվարի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Մեդիսար» ՍՊԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Մ. Գաբրիելյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***544,600 (հինգ հարյուր քառասունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում

է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[16] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[16] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«Մեդիսար» ՍՊԸ**
ք. Երևան Բագրևանդի 5	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գետառ 4/9
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 2050022415811001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02555635
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ԴԱՄԲԱՐՅԱՆ	**Մ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

Հ/Հ. Գ. Մանուչարյան
ՀՎ 00854978

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/7-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ապրանքների անվանումը	Տեխնիկական հատկանիշներ	ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1.	Ամոնիումի պերսուլֆատ	պիտակ փոշի, ապակյա կամ այլ փաթեթավորմամբ արտադրված ԳOUS 20478 -75	Аммоний надсернокислый	Չինաստան
2.	Ամոնիումի հիդրոքսիդ	Ամոնիումի հիդրոքսիդի 25%-լուծույթ, սուր հոտով անգույն հեղուկ մինչև 1լ-ոց ապակյա տարայով, արտադրված ԳOUS 3760-79	Аммоний гидроокись	Химбаза
4.	Արծաթի նիտրատ	դեղնադարչնագույն փոշի, ապակյա փաթեթավորմամբ, արտադրված ԳOUS 1277-75	Серебро азотнокислое	Stanchem
6.	Բենզիդին	մոխրագույն փոշի, ապակյա փաթեթավորմամբ, արտադրված ԳOUS 32596-73	Бензидин	Химбаза
8.	Դիմեթիլ գլիոքսիմ	սպիտակ փոշի, ապակյա տարայով	Диметилглиоксим	Չինաստան
9.	Դիէթիլ եթեր	թափանցիկ հեղուկ, մինչև 1լ-ոց ապակյա տարողությամբ, արտադրված ԳOUS 6265-52	Диэтиловый эфир	Химбаза
10.	Իզոամիլ սպիրտ	սպեցիֆիկ հոտով թափանցիկ հեղուկ, մինչև 1լ-ոց ապակյա տարողությամբ, արտադրված ԳOUS 5830-79	Спирт изопропиловый	Химбаза
11.	Ծծմբական թթու	անհոտ ծանր անգույն հեղուկ, ապակյա տարողությամբ, արտադրված ԳOUS 4204-77	Серная кислота	Химбаза
12.	Ալյումո-կալիումական շիբ	սպիտակ փոշի, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, արտադրված ԳOUS4329-77	Алюмокалиевые квасцы	Химбаза
13.	Կալցիումի քլորիդ	սպիտակ փոշի, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, արտադրված ԳOUS 450-77	Кальций хлористый	Химбаза
15.	Կալիումի ռոդանիտ	սպիտակ փոշի ապակյա փաթեթավորմամբ, արտադրված ԳOUS 4139 -75	Кальий роданистый	Չինաստան
16.	Կալիումի հիդրոքսիդ	սպիտակ, հատիկավոր պինդ նյութ, պլաստմասե տարողությամբ, արտադրված ԳOUS 24363-80	Калий гидроокись	Հարավային Կորա
17.	Կալիումի նիտրատ	սպիտակ փոշի արտադրված ԳOUS 4217-77	Калий азотнокислый	Химбаза
18.	Կապարի ացետատ	սպիտակ փոշի, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, արտադրված ԳOUS 1027-67	Калий уксуснокислый	Stanchem
19.	Կալիումի յոդիդ ք/մ	սպիտակ փոշի ապակյա փաթեթավորմամբ, արտադրված ԳOUS 4232-74	Калий йодистый	Yodel
20.	Մոլիբդենաթթվային ամոնիում	սպիտակ փոշի, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, արտադրված ԳOUS 3765-78	Аммоний молибденовокислый	Химбаза
21.	Նատրիումի ացետատ	սպիտակ փոշի, արտադրված ԳOUS 199-78	Натрий уксуснокислый	Չինաստան
22.	Յոդ բյուրեղային	մուգ մանուշակագույն բյուրեղներ, ապակյա տարայով, արտադրված 4159-79	Йод кристаллический	Yodel
23.	Նատրիումի սուլֆատ անջուր	սպիտակ փոշի, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, արտադրված ԳOUS 3765-78	Натрий сернокислый б/в	Химбаза
24.	Նատրիումի սուլֆիտ	սպիտակ փոշի,պոլիէթիլենային փաթեթավորմամբ, արտադրված ԳOUS 5644-75	Натрий надсернокислый	Չինաստան
25.	Նատրիումի հիդրոքսիդ	սպիտակ, հատիկավոր պինդ նյութ, պլաստմասե տարողությամբ, արտադրված ԳOUS 4328 -77	Натрий гидроокись	Химбаза
26.	Նատրիումի կարբոնատ	սպիտակ փոշի, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, արտադրված ԳOUS 83-79	Натрий углекислый	Химбаза
27.	Պղնձարջասպ	կապույտ բյուրեղային նյութ, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, արտադրված ԳOUS 19347 - 99	Медь сернокислая	Stanchem
28.	Ցինկի սուլֆատ x7 H2O	սպիտակ փոշի, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, արտադրված ԳOUS 4174-77	Цинк сернокислый водный	Չինաստան
29.	Քացախաթթու	սուր հոտով անգույն հեղուկ, մինչև 1լ-ոց ապակյա բանկաներով, արտադրված ԳOUS 61-75	Уксусная кислота	Химбаза
30.	Քլորոֆորմ	անգույն հեղուկ, մինչև 1լ-ոց ապակյա բանկաներով, արտադրված ԳOUS 20015-88	Хлороформ	Химбаза
32.	Ֆիկսանալ աղաթթվի ստանդարտ տիտրեր	ամպուլա 0.1N, արտադրված ՏՈՒ 6-09-25-40-87	Фиксанал соляная кислота	Уралхиминвест
33.	Ֆիկսանալ ազոտական թթվի	ամպուլա 0.1N, արտադրված ՏՈՒ 6-09-25-40-87	Фиксанал азотная кислота	Уралхиминвест
35.	Ֆիկսանալ ծծմբական թթվի	ամպուլա 0.1N, արտադրված ՏՈՒ 6-09-25-40-87	Фиксанал серная кислота	Уралхиминвест
36.	Ֆիկսանալ նատրիումի թիոսուլֆատի	ամպուլա 0.1N, արտադրված ՏՈՒ 6-09-25-40-87	Фиксанал натрий серноватистокислый	Уралхиминвест
38.	ՖիկսանալԿալիումի պերմանգանատ	ամպուլա 0.1N, արտադրված ՏՈՒ 6-09-25-40-87	Фиксанал калий марганцевокислый	Уралхиминвест
39.	Ֆիկսանալ Տրիլոն-Բ-ի	ամպուլա 0.5N, արտադրված ՏՈՒ 6-09-25-40-87	Фиксанал трилон Б	Уралхиминвест

41.	PH մետրերի ստանդարտ տիտրերի հավաք	լրակազմում 6 հատ PH 1.68-12.45	Фиксанал PH метрии	Уралхиминвест
42.	Ֆիքսանալ մագնեզիումի սուլֆատ	ամպուլա 0.1N, արտադրված ՏՈՒ 6-09-25-40-87	Фиксанал магний сернокислый	Уралхиминвест
45.	Ֆիքսանալ կալիումի բիքրոմատ	ամպուլա 0.1N, արտադրված ՏՈՒ 6-09-25-40-87	Фиксанал калий двухромовокислый	Уралхиминвест
47.	Կալիումի քլորիդ	սպիտակ փոշի, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, արտադրված ԳՕՍ 4568-95	Калий хлористый	Stanchem
48.	Լուծվող օսլա	սպիտակ փոշի, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, արտադրված ԳՕՍ 10163-76	Крахмал растворимый	Stanchem
51.	Ծծմբաթթվային կոբալտ	նարնջագույն բյուրեղներ, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, արտադրված ԳՕՍ 4462-78	Кобальт сернокислый	Химбаза
54.	Ջրածնի պերօքսիդ	33%, թափանցիկ հեղուկ, ապակյա տարայով, արտադրված ԳՕՍ 177-88	Перекись водорода	Հարավային Կորա
56.	Նատրիումի նիտրիտ	սպիտակ փոշի, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, արտադրված ԳՕՍ 4197-74	Натрий азотистокислый	Химбаза
57.	Ամոնիումի ացետատ	սպիտակ գույնի փոշի բուֆերներ պատրաստելու համար, արտադրված ԳՕՍ 3117-78	Аммоний азотнокислый	Չինաստան
58.	Կիտրոնաթթու	սպիտակ փոշի արտադրված, ԳՕՍ 3652-69	Лимонная кислота	Weifang
59.	Գրիսի ռեակտիվ	մոխրագույն փոշի, արտադրված ԳՕՍ 4517-87	Реактив Грисса	Химбаза
61.	Կալիումի սուլֆատ	սպիտակ գույնի փոշի, արտադրված ԳՕՍ 4145-74	Калий сернокислый	Химбаза
62.	Նատրիումի տետրաբորատ	սպիտակ դեղնավուն երանգով փոշի, պոլիէթիլենային փաթեթավորմամբ,արտադրվածԳՕՍ 4199-79	Натрий тетраборнокислый	Етибор
65.	Լևինի միջավայր	չոր փոշի գործարանային փաթեթավորմամբ	Acetate differential agar	Biolab
68.	Ացետատային միջավայր	չոր փոշի գործարանային փաթեթավորմամբ	Питательная среда для первичной идентификации энтеробактерий сухая (ЖЕЛЕЗО-ГЛЮКОЗО-ЛАКТОЗНЫЙ АГАР С МОЧЕВИНОЙ)	Оболенск, Московская обл. Серпуховский р-н, ФБУН ГНЦ ПМБ
77.	Օլկենիցկու միջավայր	պիտակ փոշի, ապակյա կամ այլ փաթեթավորմամբ արտադրված ԳՕՍ 20478 -75	Аммоний надсернокислый	Չինաստան

Ծանոթություն.

Ապրանքները պետք է ունենան.

1. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային (ISO, GMP, CE Mark և այլն) կամ ներքին(օր. ГОСТ, ТУ և այլն) հավաստագիր
2. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը:
3. Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

*թիվ 1,2 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ:

4. Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:
5. Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բազա:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Մեդիսար» ՍՊԸ
/տնօրեն

Մ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀՀ 00854378

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Հ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)
1.	Ամոնիումի պերսուլֆատ	կգ	0.10	1,500	150
2.	Ամոնիումի հիդրոքսիդ	լիտր	2	800	1,600
4.	Արծաթի նիտրատ	կգ	0.30	400,000	120,000
6.	Բենզիդին	կգ	0.05	300,000	15,000
8.	Դիմեթիլ գլիոքսիմ	կգ	0.05	90,000	4,500
9.	Դիէթիլ եթեր	լիտր	10	5,000	50,000
10.	Իզոամիլ սպիրտ	լիտր	2	3,500	7,000
11.	Ծծմբական թթու	կգ	36	800	28,800
12.	ալյումո-կալիումական շիբ	կգ	0.50	1,200	600
13.	Կալցիումի քլորիդ	կգ	2	500	1,000
15.	Կալիումի ռոդանիտ	կգ	0.20	8,000	1,600
16.	Կալիումի հիդրոքսիդ	կգ	1	1,500	1,500
17.	Կալիումի նիտրատ	կգ	0.10	1,500	150
18.	Կապարի ացետատ	կգ	0.30	1,000	300
19.	Կալիումի յոդիդ բ/մ	կգ	1	25,000	25,000
20.	Մոլիբդենաթթվային ամոնիում	կգ	0.05	30,000	1,500
21.	Նատրիումի ացետատ	կգ	1	2,000	2,000
22.	Յոդ բյուրեղային	կգ	1	30,000	30,000
23.	Նատրիումի սուլֆատ անջուր	կգ	1	1,500	1,500
24.	Նատրիումի սուլֆիտ	կգ	0.20	2,000	400
25.	Նատրիումի հիդրոքսիդ	կգ	1	1,000	1,000
26.	Նատրիումի կարբոնատ	կգ	0.50	1,500	750
27.	Պղնձարջասպ	կգ	0.20	2,500	500
28.	Ցինկի սուլֆատ x7 H2O	կգ	0.50	1,200	600
29.	Քացախաթթու	լիտր	10	1,000	10,000
30.	Քլորոֆորմ	լիտր	5	3,000	15,000
32.	Ֆիկսանալ աղաթթվի ստանդարտ տիտրեր	հատ	10	500	5,000
33.	Ֆիկսանալ ազոտական թթվի	հատ	10	500	5,000
35.	Ֆիկսանալ ծծմբական թթվի	հատ	20	400	8,000
36.	Ֆիկսանալ նատրիումի թիոսուլֆատի	հատ	20	500	10,000
38.	ՖիկսանալԿալիումի պերմանգանատ	հատ	10	400	4,000
39.	Ֆիկսանալ Տրիլոն-Բ-ի	հատ	20	600	12,000
41.	PH մետրերի ստանդարտ տիտրերի հավաք	լրակազմ	1	5,000	5,000
42.	ֆիքսանալ մագնեզիումի սուլֆատ	հատ	10	400	4,000
45.	ֆիքսանալ կալիումի բիքրոմատ	հատ	10	600	6,000
47.	Կալիումի քլորիդ	կգ	0.50	1,200	600
48.	Լուծվող օսլա	կգ	2	10,000	20,000

51.	Ծծմբաթթվային կոբալտ	կգ	0.05	13,000	650
54.	Ջրածնի պերօքսիդ	լիտր	2	1,000	2,000
56.	Նատրիումի նիտրիտ	կգ	0.10	1,500	150
57.	Ամունիումի ացետատ	կգ	0.50	2,000	1,000
58.	Կիտրոնաթթու	կգ	0.20	1,000	200
59.	Գրիսի ռեակտիվ	կգ	0.40	25,000	10,000
61.	Կալիումի սուլֆատ	կգ	0.50	1,500	750
62.	Նատրիումի տետրաբորատ	կգ	0.30	1,000	300
65.	Լևինի միջավայր	կգ	2	36,000	72,000
68.	Ացետատային միջավայր	կգ	0.50	45,000	22,500
77.	Օլկենիցկու միջավայր	կգ	1	35,000	35,000
Ընդամենը					**544,600**

Գնման ժամանակացույցը *կսահմանվի համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում՝ պահպանելով ՀՀ կառավարության04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիսար» ՍՊԸ
տնօրեն

Մ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/7-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	CPV անվանում և ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/
1.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Ամոնիումի պերսուլֆատ /	33691411/635	150
2.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) հեղուկ**/Ամոնիումի հիդրոքսիդ/	33691410/516	1,600
4.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Արծաթի նիտրատ/	33691411/637	120,000
6.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Բենզիդին/	33691411/639	15,000
8.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Դիմեթիլ գլիոքսիմ/	33691411/641	4,500
9.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) հեղուկ**/Դիէթիլ եթեր/	33691410/517	50,000
10.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) հեղուկ**/Իզոամիլ սպիրտ/	33691410/518	7,000
11.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Ծծմբական թթու/	33691411/642	28,800
12.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/ալյումո-կալիումական շիբ/	33691411/643	600
13.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Կալցիումի քլորիդ/	33691411/644	1,000
15.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Կալիումի ռոդանիտ/	33691411/646	1,600
16.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Կալիումի հիդրոքսիդ/	33691411/647	1,500
17.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Կալիումի նիտրատ/	33691411/648	150
18.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Կապարի ացետատ/	33691411/649	300
19.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Կալիումի յոդիդ ք/մ/	33691411/650	25,000
20.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Մոլիբդենաթթվային ամոնիում/	33691411/651	1,500
21.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Նատրիումի ացետատ/	33691411/652	2,000
22.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Յոդ բյուրեղային/	33691411/653	30,000
23.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Նատրիումի սուլֆատ անջուր/	33691411/654	1,500
24.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Նատրիումի սուլֆիտ/	33691411/655	400
25.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Նատրիումի հիդրոքսիդ/	33691411/656	1,000
26.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Նատրիումի կարբոնատ/	33691411/657	750
27.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Պղնձարջասպ/	33691411/658	500
28.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Ցինկի սուլֆատ x7 H2O/	33691411/659	600
29.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) հեղուկ**/Քացախաթթու/	33691410/519	10,000
30.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) հեղուկ**/Քլորոֆորմ/	33691410/520	15,000
32.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/Ֆիկսանալ աղաթթվի ստանդարտ տիտրեր/	33691160/603	5,000
33.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/Ֆիկսանալ ազոտական թթվի/	33691160/604	5,000
35.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/Ֆիկսանալ ծծմբական թթվի/	33691160/606	8,000
36.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/Ֆիկսանալ նատրիումի թիոսուլֆատի/	33691160/607	10,000

38.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/ՖիկսանալԿալիումի պերմանգանատ/	33691160/609	4,000
39.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/Ֆիկսանալ Տրիլոն-Բ-ի/	33691160/610	12,000
41.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/PH մետրերի ստանդարտ տիտրերի հավաք/	33691400/599	5,000
42.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/ֆիքսանալ մագնեզիումի սուլֆատ/	33691160/612	4,000
45.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/ֆիքսանալ կալիումի բիքրոմատ/	33691160/615	6,000
47.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Կալիումի քլորիդ/	33691411/662	600
48.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Լուծվող օսլա/	33691411/663	20,000
51.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Ծծմբաթթվային կոբալտ/	33691411/666	650
54.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) հեղուկ**/Ջրածնի պերօքսիդ/	33691410/521	2,000
56.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Նատրիումի նիտրիտ/	33691411/670	150
57.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Ամունիումի ացետատ /	33691411/671	1,000
58.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Կիտրոնաթթու/	33691411/672	200
59.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Գրիսի ռեակտիվ/	33691411/673	10,000
61.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Կալիումի սուլֆատ/	33691411/674	750
62.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Նատրիումի տետրաբորատ/	33691411/675	300
65.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Լևինի միջավայր/	33691411/678	72,000
68.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Ացետատային միջավայր/	33691411/681	22,500
77.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Օլկենիցկու միջավայր/	33691411/688	35,000
Ընդամենը			**544,600**

Վճարման ժամանակացույց *կսահմանվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիսար» ՍՊԸ
տնօրեն

Մ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հ/Ա 9 Վանաձոր
Ref 008547378

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-9/7-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-9/7-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն